

«Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի մամլո ասուլիսը

Հուլիսի 30-ին տեղի ունեցավ մարզպետ Սարգիս Սահակյանի մամլո ասուլիսը: Լրատվամիջոցների ղեկավարներին մարզպետը ներկայացրեց 2015 թվականի վեց ամսվա ընթացքում մարզում իրականացված պետական, համայնքային և այլ ներդրումային ծրագրերի գործընթացի ընդհանուր նկարագիրը:

Մարզպետը նշեց, որ առաջին կիսամյակի ընթացքում մարզում կատարվել է շուրջ 280 ծրագիր, որի ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 41,717,959.3 հազար դրամ: Այդ թվում՝ պետական բյուջեից հատկացումները եղել են **3,630,003.9** հազար դրամ, բարեգործական կազմակերպությունների, այլ ծրագրերի, անհատ բարերարների և մասնավոր ներդրողների միջոցներով՝ **37,687,770.3** հազար դրամ, համայնքների բյուջեներինը՝ **400,185.1** հազար դրամ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, ըստ ոլորտների, մարզում կատարված միջոցառումների ցուցանիշները քաղաքաշինության ոլորտում կազմել են **3,107,650.9** հազար դրամ, գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտում՝ **1,992,542.2** հազար դրամ, սոցիալական ապահովության ոլորտում՝ **44,781.8** հազար դրամ: Ենթակառուցվածքներ ոլորտում, ըստ բնագավառների, կատարված հատկացումները հատելյալն են. ջրամատակարարման բնագավառ՝ **3,589,731.7** հազար դրամ, ճանապարհաշինության բնագավառ՝ **30,156,437.5** հազար դրամ, գազիֆիկացման բնագավառ՝ **2,826,815.2** հազար դրամ:

Մարզի 114 համայնքում 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում՝ սոցիալական ապահովության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում, ջրամատակարարման, ճանապարհաշինության և գազիֆիկացման բնագավառներում ներդրումային գործունեություն են ծավալել հետևյալ բարեգործական կազմակերպությունները՝ GLOBAL ALD NETWORK հոլանդական բարեգործական կազմակերպությունը, «ԱՌԴԱ» բարեգործական

կազմակերպությունը, Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր» ծրագիրը, «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությունը, GIZ ADA ECO CONSULTING GROUP կազմակերպությունը, (COAF) Հայաստանի մանուկներ հիմնադրամը, «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությունը, «Fuller Center for Housing Armenia» բարեգործական կազմակերպությունը, «World Vision International» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը, „Հայաստան,, համահայկական հիմնադրամը, Հայաստանի սոցնեղրոմների հիմնադրամը, „Հաբիթաթ,, հիմնադրամը և այլ ներդրող կազմակերպություններ:

ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով մշակվել է 2015 թվականի համար նախատեսված ռազմավարությունը, որտեղ առաջինը նախատեսվում է հանրապետությունում և մարզում գործող տարբեր ծրագրերի, բարեգործական կազմակերպությունների, անհատ բարերարների և մասնավոր ներդրողների հետ տարվող աշխատանքները:

Կազմակերպությունների մեծ մասը դեռևս տարեկան աշխատանքային ծրագրերի կազմման փուլում են, որի հետևանքով դեռևս հստակեցված չեն մարզում առաջիկայում իրականացվելիք ներդրումների չափերը: Այդ ծավալներն ընդլայնելու նպատակով հանդիպումներ են կայանում հանրապետությունում գործող տարբեր միջազգային կառույցների ներկայացուցիչների՝ ԱՄՆ-ի, ԻԻՀ-ի, ԱՄԷ-ի, ՌԴ-ի և այլ երկրներից ներկայացուցիչների հետ, քննարկվում են համատեղ գործակցության ծրագրերը: Մասնավորապես, արդեն իսկ առաջարկներ են ներկայացվել սոցիալական, կրթության, առողջապահության, մշակույթի և սպորտի բնագավառներում ներդրումներ կատարելու նպատակով:

Մարզի սոցիալ-տնտեսական ընդհանուր նկարագիրն ստանալուց հետո, լրագրողները մարզպետին դիմեցին իրենց հետաքրքրող հարցերով: